մինչև 1729. վախճանած է 1754 Փետր. 5ին Պոլիս. Ս. Յակոբի վանքին մէջ բազմաթիւ են իր յիշատակները որոնց գլխաւորներուն յիշատակարանները նոյնութեամբ կը դնենք հոս.

«Աստուծով ի թուին ՌՃՀԹ (=1730) ամին կազմեալ եղև մարմարեայ սուրբ բեմս ի յիշատակ Ակնցի Երևանեանց Սարրաֆ մահտեսի Սեղբեստրոսին. և կողակցոյն և ծնողաց և ամենայն զարմից նորա ի պատրիարքութեան Գրիգորի և Յովհաննէս վարդապետաց. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք.

«Յիշատակ է գեղեցիկ խաչկալս Ակնցի Երևանեանց Սարրաֆ պէզիրկեան պաշը մահտեսի Սեղբեստրոսին. եւ կողակցոյն մահտեսի Արլիգնազին և ծնողաց նոցա և ամենայն զարմից և զաւակաց նոցա. ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. Աստուածադիր Սթոռն Սրբոյն Յակոբայ. ի սուրբ խորան Էջմիածնի. ի թվին ՌՃՁԲ (1733). յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք»։

«Ի պատրիարքութեան Տեառն Գրիգորի վեհին. կազմեցաւ մարմարեայ բեմս սուրբ Էջմիածնի խորանիս արդեամբ Ակնցի Երևանեանց մահտեսի Սեղբեստրոսին. ի յիշատակ իւրն և ամենայն զարմից իւրոց. ի թվին ՌՃՂԱ (=1742). յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն»։

«Յիշատակ է խանս և գերեզմանի մօտ եղեալ պարտէզն. Ակնցի Երևանեանց լուսահոգի Մանուէլի որդի մահտեսի Սեղբոստրոսին. որ իւր արդեանցն արար զսա յիշատակ Ս. Յակոբայ, Ս. Յարութեան, Ս. Ծննդեան, Ս. Աստուածածնի, Ս. Փրկչի և Ս. Հրեշտակապետի վանքերուն. այսու պայմանաւ որ զիմ հին և նոր ննջեցեալքս ամեն օր, ամեն սրբոյ պատարագին յիշատակեն. և եկած վարձքէն ա ա փարա ժամուց ժամարարներուն և պախճային մէրամէթին խարճեն. և Սրբոյ Յակոբայ միաբանացն հացգին տան. ով ոք զսա կարեոր յիշատակս ջրէ, Աստուած զինքն ի կենաց գրոց ջնջէ.» (1750)։ Այս վերջին յիշատակարանը ամիրային յիշատակած խանին պատին ապուցուած մարմար քարի մը վրայ քանդակուած է. Սեղբոս ամիրայի յիշատակներու մանրամասնութիւնները և Ս. Աթոռի մասին անոր հոգածութիւնը տեսնել (ժպկ. հատ. Բ. էջ 13—14 և 41. Բազմ. 1924, էջ 120. ՄՁ. Թ. 532. և Ցուց. Պ.)։ Սեղբոս Ամիրայ 1749ին չինել կուտայ Պոլսի մէջ, իր բարեկամին Շղթայակիրի տապանաքարը և կը դրկէ Երուսաղէմ։